

Ըմբոստանքի ու նաեւ բուռն սիրոյ:
 Իր մէջ, իր մէջ կը կայծկըլտայ հոգի մ'հին
 Յին դիւցազնի եղած փըսոր մը գուցէ
 Կոյսի մ'աղուոր արցունքով.
 Յիւլէ մը կայ Յայկէն, փոշի մ'Արամէն,
 Անանիայէն բիբ մը դէտ
 Դեռ աստղերու ճաճանչներով թաթաղուն,
 Ա՛զգ մը կայ հոն, սեղանիս վրայ ա՛զգ մը հին,
 Որ այսօր իր վերաշողշող այգուն մէջ,
 Յողի բնատուր մարմնոյն տակ ինձ կը խօսի,
 Կ'ոգեղիսէ - եւ աստղերու ինչպէս ցանն
 Անհունութեան մէջ կապոյտ -
 Փոշիներովն իր հրաբորբ
 Յոգիս քաղցրիկ փայլակներով կ'ոռոգէ:
 Ու այն ատեն լարը ջղերուս կը դողայ
 Սարսուռով մ'յորդ, ա՛յն սարսուռով՝ որ մըտքին
 Յերկերուն վրայ աւելի՛
 Ըստեղծիչ է քան գարնան հովն արփագաղջ:
 Ու կը զգամ անցքն ուղեղէս
 Նոր յուշերո՛ւ, հոգիներո՛ւ դեռ կարմիր
 Խոր վերքերովն իրենց, վրէ՛ժի շըրթունքներ.
 Եւ այդ հողն, այդ փոշին, զոր ես կը պահեմ
 Ա՛յնքան սիրով՝ որքան հոգիս պիտ' չընէր
 Եթէ մարմնոյս աճիւններն
 Օր մը մահէն վերջ հովերուն մէջ գըտնար.
 Այդ պանդուխտ մասն Յայաստանի, մասունքն այդ
 Մնացած մեր յաղթ պապերէն,
 Բըժժանքն ու ձօնն այդ կարմիր,
 Սիրտըս սեղմած մագիլներով անձանօթ,
 Երկինքն ի վեր, գըրքի մը վրայ, թանկագին
 Ժամու մը մէջ ժըպիտներու, սերերու,